





Հանդիպող յօրինուածքների (մանրանկար-  
չուծիւն, քանդակ, գեղարուեստական մե-  
տաղ, որմնանկար եւ այլն):

Քանի որ դրամական քաղաքականու-  
թեան մէջ ընդունուած էջը թանկարժէք  
մետաղներից ոչ ստանդարտ պատկերա-  
գրութեամբ դրամներ թողարկել, կարելի է  
ասել, որ ճգնաժամի պատճառով արծաթէ  
դրամների պարտադրուած փոխարինումը  
պղնձով հնարաւորութիւն տուեց մահմե-  
դական տարբեր տիրակալներին եւ դրա-  
մագործ վարպետներին յագուրդ տալ գե-  
ղեցիկի նկատմամբ իրենց ցանկութիւննե-  
րին՝ ստեղծելով գեղարուեստական ձեւա-  
ւորման առումով բարձրարժէք պղնձէ  
դրամներ:

Մահմեդական այն դրամները, որոնք  
ունեն մարդու կամ, աւելի ճիշտ, մարդա-  
կերպ պատկերներ, չնայած որոշ արեւե-  
լեան ոճաւորմանը, իսլամական գաղափա-  
րախօսութեան կամ մահմեդական մոտիւի  
որեւէ հետք չեն կրում: Հետեւաբար,  
պատկերներով մահմեդական դրամները չի  
կարելի համարել բացարձակ շեղում իսլա-  
մում ընդունուած կարգից:

Նոյն XII դարում, երբ հանդէս են գա-  
լիս պատկերակիր դրամները, մեծ տարա-  
ծում են ստանում նաեւ սելջուկեան տար-  
բեր տիրակալների մակադրոշմներով բիւ-  
զանդական ֆոլիսները<sup>13</sup> (նկ. 7): Մակա-  
դրոշմները հիմնականում հանդիպում են  
այն տիրակալների դրամների վրայ, որոնք  
ունեն նաեւ ինքնուրոյն թողարկումներ,  
այդ թւում նաեւ՝ քրիստոնէական պատկե-  
րագրութեամբ: Այս փաստը Արեւելքում  
բիւզանդական դրամների լայն տարա-  
ծուածութեան եւս մի վկայութիւն է:

Խաչակրաց արշաւանքներից յետոյ Ա-  
րեւելքում մեծանում է նաեւ այստեղ հաս-

տատուած քրիստոնէայ իշխանութիւնների  
ազդեցութիւնը: Խաչակիրները սկսում են  
դրամներ թողարկել XI դարի ամենավեր-  
ջում, սակայն դրամահատութիւնը ա-  
ռանձնապէս մեծ չափերի է հասնում XII  
դարում: Արեւելքում խաչակիրների առա-  
ջին թողարկումները նոյնպէս կրկնում են  
XI դարի բիւզանդական պղնձէ անանուն  
ֆոլիսների պատկերագրութիւնը<sup>14</sup> (նկ. 8):  
Սա մէկ անգամ եւս ցոյց է տալիս, որ տա-  
րածաշրջանում ամենատարածուած եւ ըն-  
դունուած պղնձէ դրամական միաւորը  
բիւզանդական ֆոլիսն էր:

Քրիստոնէական պատկերագրութեամբ  
դրամներ թողարկել են հետեւեալ մահմե-  
դական տիրակալները՝ Ջենգեան Նուր ադ-  
դին Մահմուդը (1146-1174 թթ.), Արդու-  
քեան Հուսամ ադ-դին Թիմուրթաշը (1152-  
1176 թթ.) եւ Ճաքր ադ-դին Կարա-Արսլա-  
նը (1144-1174 թթ.), Դանիշմենդեան Ամիր  
Ղազին (1104-1134 թթ.), Մելիք Մուհամե-  
դը (1134-1142 թթ.), Նասր ադ-դին Մու-  
համեդը (1175-1178 թթ.), Սալդուքեան Իզ-  
ադ-դինը, Մենգուջեան Սուլէյման իբն Իս-  
հակը (1181 թ.) եւ ալ-Հուսէյին իբն Սուլէյ-  
մանը (XII դ.), Ամիրի Ինալեան Սաադ ադ-  
դուլան (1142 թ.), Ջեմալ ադ-դին Մահ-  
մուդը (1141-1183 թթ.), Ռումի սելջուկեան  
Մասուդ I-ը (1116-1155 թթ.), Քայ-Նոսրով  
I-ը (1192-1196 թթ.): Ռումի սելջուկեան  
միւս սուլթանները XII դարի երկրորդ կէ-  
սից մինչեւ XIII դարի առաջին կէսը թո-  
ղարկում էին պղնձէ դրամներ, որոնց վրայ  
պատկերուած էր սբ. Գեորգը՝ ձիու վրայ  
կամ վիշապին սպանելիս:

Մենք կանգ կ'առնենք դրամների մի  
խմբի վրայ, որը դեռեւս բաւարար չափով  
ուսումնասիրուած չէ: Այս դրամական տի-  
պին առ այսօր անդրադարձել է միայն Ե.

Պախոմովը<sup>15</sup>: Նա, ձեռքի տակ ունենալով  
այս դրամներից միայն մէկ նմուշ՝ թերի  
գրութեամբ՝ աս-սուլթան ալ-մուազիմ  
(սուլթան գերագոյն), փորձել է որոշել  
դրամի պատկանելութիւնը եւ թուագրել  
այն: Սակայն Հայաստանի պատմութեան  
թանգարանում պահուող չորս այլ օրի-  
նակները՝ յայտնաբերուած Անիից (ՀՊԹ  
5706, նկ. 9), Դուխից (ՀՊԹ 18380/6, նկ.  
10), Վայքից (ՀՊԹ 18454/16, նկ. 11) եւ  
Արմաւիրից (ՀՊԹ 18447/5, նկ. 12), հնարա-  
ւորութիւն են տալիս քննութիւն կատարել  
նոր տեսանկիւնից:

Վերոյիշեալ դրամի դիմերեսին՝ կէ-  
տաւոր եւ գծային շրջանակների մէջ,  
պատկերուած է Հայկական խաչ: Դարձե-  
րեսին արաբերէն գրութիւններ են, կենտ-  
րոնում՝ գծային շրջանակի մէջ՝ Իզ ադ-  
դին: Դարձերեսի եզրագօտու շրջանաձեւ  
գրութիւնը թանգարանի օրինակների վրայ  
ընթերցւում է ամբողջութեամբ՝ աս-սուլ-  
թան ալ-մուազիմ շահնշահ:

Ե. Պախոմովն այն կարծիքն է յայտ-  
նում, որ դրամի վրայ յիշատակուած է  
Ռումի (Իկոնիայի) սելջուկեան սուլթան  
Կըլըչ-Արսլան II-ը (1156-1192 թթ.). «Նրա  
կողմէ Կիլիկիայում եւ դրանից հիւսիս-արե-  
ւելք կային բազմաթիւ մանր քրիստոնէա-  
կան Հայկական իշխանութիւններ, որոնք  
կան Հայկական իշխանութիւններից եւ աթա-  
կախման մէջ էին սուլթաններից եւ աթա-  
քեկներից: Այս իշխաններից աւելի ուշ  
հանդէս եկան Ռուբինեանները՝ Կիլիկիա-  
յում Հայկական թագաւորութեան հիմնա-  
դիրները: Միգուցէ, այս դրամը թողար-  
կուած է Ռուբինեաններից որեւէ մէկի  
կողմից՝ նախքան նրանց թագաւորական  
տիտղոսի ընդունումը, բայց հնարաւոր է,

որ այս դրամը Ռուբինեանների հետ ընդ-  
հանուր ոչինչ չունի»<sup>16</sup>:

Մեզ քիչ հաւանական է թւում, որ  
այս դրամը կարող է թողարկուած լինել ո-  
րեւէ կիլիկեան իշխանի կողմից, քանի որ  
դրամագիտութեանը յայտնի չեն XII դարի  
կիլիկեան իշխանների դրամներ՝ հատուած  
որեւէ մահմեդական տիրակալի գերիշխա-  
նութեան ներքոյ, այսինքն՝ մահմեդական  
սիւլթանի անուան յիշատակութեամբ: Կի-  
լիկեան իշխանական շրջանի դրամները  
կրում են քրիստոնէական պատկերներ եւ  
հայերէն գրութիւններ՝ միայն իշխանի ա-  
նուան արձանագրութեամբ: Աւելացնենք  
նաեւ, որ Կիլիկիայի Հայկական իշխանու-  
թեան շրջանի դրամները թողարկուել են  
միայն պղնձից, շատ քիչ քանակութեամբ  
եւ ունեցել են շրջանառութեան խիստ  
սահմանափակ ոլորտ: XII դարում ստեղ-  
ծուած ծանր քաղաքական պայմաններում,  
երբ ամբողջ տարածաշրջանը բաժանուած  
էր միմեանց հետ Հակասութեան մէջ  
գտնուող մանր մահմեդական իշխանու-  
թիւնների միջեւ, Ռուբինեան իշխանների  
փոքրաթիւ դրամները դժուար թէ Կիլի-  
կիայի սահմաններից դուրս գալու եւ դրա-  
մաշրջանառութեան ոլորտի առումով բա-  
ւականաչափ հեռու գտնուող Հայաստանի  
արեւելեան շրջաններում (Անի, Դուխն,  
Վայք, Արմաւիր) յայտնուելու հնարաւոր  
ութիւն ունենային:

Այժմ քննենք այն հարցը, թէ արդեօք  
հնարաւոր է, որ դրամի վրայ յիշատա-  
կուած Իզ ադ-դինը լինի Ռումի սելջուկ  
Կըլըչ-Արսլան II-ը, ինչպէս ենթադրում է  
Ե. Ա. Պախոմովը: Ճիշտ է, այդ սուլթանը  
կրել է Իզ ադ-դին (=կրօնի, իսլամի փառք)  
լաքաբը<sup>17</sup>, սակայն իր դրամների վրայ նա  
երբեք չի յիշատակում այդ տիտղոսը, այլ

13 N. M. Lowick, S. Bendall, P. D. Whitting, *The 'Mardin' Hoard: Islamic Countermarks on Byzantine Folles*. Ringwood, Hampshire, 1977

14 D. M. Metcalf, *Coinage of the Crusades and the Latin East in the Ashmolean Museum Oxford*, London, 1995

15 E. A. Пахомов, *О нескольких медных монетах, чеканенных в Армении в XIII-XIV в.в.*, "Известия Кавказского историко-археологического института", т. IV, Тифлис, 1927, с. 164

16 ԱճԻ, էջ 164  
17 Լաքաբը մահմեդական տիրակալի պատուա-  
նուն է, որը հաճախ է գալիս որպէս տիտղոսի  
բաղկացուցիչ մաս:

Հանդէս է գալիս ուղղակի Կըլըջ-Արսլան իբն Մասուդ ձեռով<sup>18</sup>: Բացի այդ, նշուած է սուլթան գերագոյն (աս-սուլթան ալ-մուազիմ) տիտղոսը, սակայն երբեք չի հանդիպում շահնշահը:

Աս-սուլթան ալ-մուազիմ շահնշահ տիտղոսը XI դարում կրում էին Մեծ սելջուկները, իսկ XII դարից՝ Իրաքի սելջուկները, որոնց նստավայրը Բաղդադն էր: Արաբ պատմիչ իբն Զուբայրը, նկարագրելով XII դարի Բաղդադը, գրում է. «Սուլթանի մզկիթը (Ջամի աս-սուլթան) գտնուած է քաղաքից դուրս՝ սուլթանի պալատներին կից: Սուլթանին անուանում են նաեւ շահնշահ»<sup>19</sup>: XI դարում Մեծ սելջուկները դրամները վրայ հանդէս են գալիս իրենց լրիւ տիտղոսով՝ աս-սուլթան ալ-մուազիմ շահնշահ<sup>20</sup>: Սակայն ցանկանում ենք ընդգծել մի առանձնայատկութիւն. սելջուկեան ոչ մի տիրակալ խալիֆայութեան մայրաքաղաք Բաղդադում (Մեդինաթ աս-Սալամ) թողարկած դրամների վրայ չի նշուած աս-սուլթան ալ-մուազիմ շահնշահ լաքարը, այլ տեղադրուած է միայն իր անունը, (օրինակ՝ Ջալալ ադ-դուլնիա Մելիքշահ, Գիյաս ադ-դին Մուհամեդ եւ այլն): Փոխարէնը սելջուկեան սուլթանների այս տիտղոսը յիշատակուած է Իրանի եւ Միջագետքի այն վայրերում հատած դրամների վրայ, որոնք ճանաչել են վերջիններիս գերիշխանութիւնը:

Քննարկուող դրամի վրայ իզ ադ-դին անունը ներկայացուած է առանձին՝ կենտրոնի շրջանակի մէջ, իսկ սուլթան մուազիմ շահնշահը՝ եզրագօտու շրջանածեւ գրութեան մէջ: Եթէ սուլթան մուազիմը

վերաբերուած է իզ ադ-դինին եւ վերջինս, ըստ Ե. Պախոմովի, ոչ թէ անուն է, այլ տիտղոս, ինչո՞ւ դրամի վրայ ամբողջ լաքարը իրար հետ չի նշուած՝ աս-սուլթան մուազիմ իզ ադ-դին: Դրամի գրութիւնների դասաւորման տեսանկիւնից քիչ հաւանական է, որ տիրակալի ամբողջական տիտղոսը բաժանուի եւ տեղադրուած լինի դրամի դաշտի տարբեր հաստատուներում, քանի որ Կըլըջ-Արսլանի դէպքում իզ ադ-դինը ոչ թէ անուն է, այլ նրա լաքարի մի մասը:

Հետեւաբար, յենուելով թանգարանում պահուող դրամների քննութեան վրայ, որտեղ որոշակիօրէն ընթերցուած է շահնշահ բառը, մենք կարող ենք ենթադրել, որ սուլթան մուազիմը ոչ թէ իզ ադ-դինի, այլ նրա սիւղերենի՝ Իրաքի սելջուկեան մեծ սուլթանի տիտղոսն է:

Մեր կարծիքով առաւել հաւանական է, որ քննութեան առարկայ դրամի վրայ յիշատակուած լինի Կարինի ամիրա իզ ադ-դին Սալդուխ իբն Ալի (1129-1168 թթ.): Փորձենք հիմնաւորել առաջ քաշուած վարկածը՝ յենուելով պատմական եւ դրամագիտական նիւթի համադրութեան վրայ:

Յաւոք, աղբիւրները բաւարար տեղեկութիւններ չեն հաղորդում Կարինի Սալդուխեանների մասին: Այնուամենայնիւ, եղած տուեալները մեզ թոյլ են տալիս եզրակացնել, որ իզ ադ-դին Սալդուխը եղել է մեր տարածաշրջանում մեծ կշիռ ունեցող մահմեդական տիրակալներից մէկը: Յայտնի է, որ 1153-1154 թուականներին իզ ադ-դին Սալդուխը ակտիւ ռազմական գործողութիւններ է ծաւալել Կարսի շրջանում՝ ղփչաղների եւ վրացիների դէմ: Կարսի կառավարիչ Քարամ ադ-դինը նոյնիսկ ընդունել է իզ ադ-դինի գերիշխանութիւնը: Վերջինս երկու արձանագրութիւն է թողել Կարսի բերդապարիսպների

18 N. Aykut, *Some Coins of Mas'ud I, Qilij-Arslan II, and the Maliks*, "American Journal of Numismatic", Second series, 7-8, New York, 1996, p. 182  
 19 И. Б. Михайлова, *Средневековый Багдад*, Москва, 1990, с. 14  
 20 I. Artuk, C. Artuk, *Istanbul Arkeoloji Müzeleri Teşirdeki İslami Sikkeler Kataloğu*, İstanbul, 1971, pp. 342-345

վրայ<sup>21</sup>: Սալդուխը եւ իւրաքանչէր Սուլթան II-ը հակաւրացական պայքարի եռանդուն կազմակերպիչներն էին: Այդ պայքարին մասնակցում էին նաեւ Կարսի Ահաբեանները, Անիի Շադադեանները, Ատրպատականի Ելտիուզեանները: Իզ ադ-դինը հովանաւորում էր նաեւ վրաց թագաւորներից ղժգոհ Հայ ազնուականներին: Վարդան Արեւելցին, յիշատակելով Հայկական լեռնաշխարհում հաստատուած մահմեդական տիրակալներ Շահ Արմէն Սուլթան II-ին, Սալդուխեան իզ ադ-դինին եւ Ելտիուզեան Շեմս ադ-դինին, նշում է նրանց քրիստոնէասէր լինելը<sup>22</sup>:

Քննութեան առարկայ դրամի պատկանելութիւնը որոշելու հարցում մեզ առաջին հերթին կարող է օգնել դրամ համեմատութիւնը իզ ադ-դին Սալդուխի մէկ այլ դրամի պատկերագրութեան հետ, որը դրամագիտական գրականութեան մէջ ներդրում է որպէս այս տիրակալի միակ թողարկում: Դրամն ունի հետեւեալ նկարագիրը՝ դիմերեսին Բիւզանդիայի կայսր Յովհան II Կոմնէնի (1118-1143 թթ.) դրամից ընդօրինակած յորինուածք է, որտեղ պատկերուած են կայսրը եւ սբ. Գեորգը՝ պատկերուած են կայսրը եւ սբ. Գեորգը կենտրոնում խաչը բռնած: Դարձերեսին արաբերէն գրութիւն է. «Սուլթան/գերագոյն Մասուդ/իբն Մուհամեդ իզ ադ-դին/Սալդուխ իբն Ալի» (նկ. 13-15): Դրամի վրայ յիշատակուած է իզ ադ-դինի սիւղերենը՝ Իրաքի սուլթան Մասուդ իբն Մուհամեդը (1134-1152 թթ.), որը կրում էր գերագոյն սուլթան (աս-սուլթան ալ-մուազիմ) տիտղոսը: Այս դրամի պատկերագրութիւնից պարզ է դառնում, որ Սալդուխեան իզ ադ-դինը, իշխելով հիմնականում

Հայերով, ինչպէս նաեւ այլ քրիստոնէաներով բնակեցուած Կարինում, կրել է քրիստոնէական մշակոյթի ազդեցութիւնը եւ իր դրամական թողարկումներում օգտագործել քրիստոնէական պատկերագրութիւն՝ ընդօրինակուած բիւզանդական դրամից:

Իզ ադ-դինի յայտնի դրամի տիպում նա հանդէս է գալիս իր լրիւ անունով, իրեն սիւղերեն է յիշատակում Իրաքի սելջուկեան գերագոյն սուլթան Մասուդ իբն Մուհամեդին (1134-1152 թթ.): Յաւոք, դրամի վրայ թողարկման ժամանակի բացակայութիւնը հնարաւորութիւն էր տալիս այն ստոյգ թուագրել: Սակայն յայտնի է, որ Սալդուխը իշխել է աւելի երկար (1132-1168 թթ.), քան Մասուդը: Հետեւաբար, դրամների այս խումբը կարելի է թուագրել մինչեւ 1152 թուականը, այսինքն՝ մինչեւ Մասուդի մահը: Այս դէպքում հարց է ծագում. մի՞թէ Սալդուխը դրամից յետոյ դրամներ չի հատել:

Գործելով հիմնականում Հայաստանում՝ նա կարող էր թողարկել Հայկական խաչի պատկերով դրամ՝ տեղադրելով իր եւ իր սիւղերենի անունը, ինչը, ըստ մահմեդական դրամական իրաւունքի, պարտադիր պայման էր: Եթէ Սալդուխի յայտնի դրամական տիպի վրայ յիշատակուած է Մասուդը, ապա մեր կողմից քննարկուող դրամի վրայ արձանագրուած է միայն Իրաքի սելջուկների տիտղոսը (աս-սուլթան ալ-մուազիմ շահնշահ): 1152/53 թուականին՝ մեծ սուլթան Մասուդի մահից անմիջապէս յետոյ, նրա յաջորդները՝ Մելիքշահ III-ի, Մուհամեդ II-ի եւ Սուլթանշահի միջեւ սկսուած է ներքին բարդ պայքար: Ժամանակակիցները շատ բարձր են գնահատում Մասուդին. «Երբ մեռաւ Մասուդը, նրա հետ մեռաւ սելջուկեան տան երկու զանգերը՝ թեոկրատիկ և սեկուլար»<sup>23</sup>: 1153/54 թուականին օղակութիւնը գերեցին նաեւ մեծ սուլթան

21 Ա. Խաչատրեան, *Կարնոյ Սաղոյսեանների ժամանակագրութիւնը եւ տոհմաբանութիւնը՝ ըստ արաբական վիմագիր աղբիւրների*, «Արեւելեան աղբիւրագիտութիւն», հտ. Ա, Երեւան, 1988, էջ 99-133  
 22 Հաւաքումն պատմութեան վարդապետի վարդապետի, Վեներիկ, 1862, էջ 125

23 В. В. Бартольд, *Теократическая идея и светская власть ...*, с. 312

Մինչև 1159 թվականից սելջուկեանների համար Բաղդադում այլևս չէր կարգացում ուրբաթորեայ քարոզ (խուլթբա), այսինքն՝ արբասեան խալիֆը չէր ցանկանում ճանաչել նրանց իշխանութիւնը իր մայրաքաղաքում: «XII դարը իսլամական Միջին արեւելքի համար դարձաւ ամենախառը եւ քաղաքականապէս տարասեռ դարերից մէկը: Այդ դարի վերջում դադարեցին գոյութիւն ունենալ Իրաքի սելջուկները»<sup>24</sup>: Նման խառը քաղաքական իրավիճակում, հաւանաբար, Իզ ադ-Ղին Սալդուխը չի ցանկացել նշել որեւէ մէկի անունը, այլ ուղղակի յիշատակել է Իրաքի սելջուկների տիրողը՝ սուլթան գերագոյն շահնշահ:

Մեր հետաքրքրութեան առարկան հանդիսացող խաչով դրամների դարձերեսի ձեւաւորման որոշ առանձնայատկութիւններ շատ յիշեցնում են Իզ ադ-Ղին Սալդուխի յաջորդ Նասր ադ-Ղին Մուհամեդ իբն Սալդուխի (1174 -?) դրամների դարձերեսը: Վերջինիս դրամների դիմերեսին պատկերուած է հեծեալ, որը նետ է արձակում ինչ-որ կենդանու ուղղութեամբ, իսկ դարձերեսին արաբերէն գրութիւններ են. կենտրոնում՝ գծային շրջանի մէջ (ինչպէս Իզ ադ-Ղինի խաչով դրամների վրայ)՝ «Նասր ադ-Ղին Կըզըլ/Արսլան Մուհամեդ/իբն Սալդուխ»: Եզրագօտու շրջանաձեւ գրութեան մէջ Սալդուխեանների սիւլթանի՝ Իրաքի եւ արեւմտեան Իրանի սուլթանի անունը եւ տիրոջն է. «Սուլթան գերագոյն Թողըրի իբն Արսլան», որն իշխել է 1176-1194 թթ. (նկ. 16-17):

Այն մահմեդական դրամները, որոնց դիմերեսին միայն խաչ է պատկերուած, մենք հակուած ենք դիտարկել որպէս հայ-

կական ազդեցութիւն, այլ ոչ բիւզանդական, քանի որ դրանք ունեն հայկական խաչին բնորոշ ձեւ: Խօսքը վերաբերում է ոչ միայն քննարկուող դրամին, այլև Մենգուջեան Սուլթան իբն Իսհակի (1181 թ.) եւ ալ-Հուսէին իբն Սուլթանի (XII դ.) դրամներին, որոնց վրայ պատկերուած խաչը նոյնպէս հայկական ոճաւորում ունի<sup>25</sup>:

Խաչի պաշտամունքը բացառիկ տեղ է դրադեցնում հայերի քրիստոնէական աշխարհընկալման մէջ: Հայոց եկեղեցին խաչապաշտութիւնը դրեց հոգեւոր գաղափարախօսութեան հիմքում՝ Խաչելութիւնը դիտարկելով որպէս փրկագործութեան եւ յաւերժութեան գաղափարի դրսեւորում: Հ. Պետրոսեանը հետեւեալ եզրակացութիւնն է անում. «Հայ եկեղեցու ջանքերի շնորհիւ խաչը դարձաւ միջնադարեան հայ հանրոյթի ինքնութեան ամենաառաջնային ու անմիջական նշանը»<sup>26</sup>: Իսկ ակադեմիկոս Վ. Ա. Գորդլեւսկին գրում է. «Սելջուկեանների վրայ մեծ ազդեցութիւն են թողել հայերը... Հաւանաբար, հէնց այդ ժամանակ էլ հայերից օղուզներին (=սելջուկներ) է անցել խաչ (xác) բառը»<sup>27</sup>: Յ. Օրբելին, խօսելով սելջուկեան կոնաձեւ դամբարանային կառոյցների (gumbad=գամբէթ) վրայ հայկական եկեղեցական ճարտարապետութեան ազդեցութեան մասին, անդրադարձել է նաեւ սելջուկեան տապանաքարերին. «Երբ մենք յանձն ենք առնում ուսումնասիրել սելջուկեան բնորոշ ուղղահայեաց կանգնեցուած տապանաքարը, որն առջեւի մասում հարուստ փորագրութեամբ հարթ սալաքար է՝ դէպի հիմքը գնացող ատամով, ապա մենք տեսնում ենք դաշտի զարդանախշի մի կառու-

25 St. Album, *A Checklist of Islamic Coins*, Santa Rosa, 1998, p. 94  
 26 Հ. Պետրոսեան, *Խաչքարերի ծագումը, գործառնոյթը, իմաստաբանութիւնը (պատմահնագիտական ուսումնասիրութիւն)*, սելմագիր, Երեւան, 2004, էջ 12-13  
 27 В. А. Гордлевский, *Исз. աշխ.*, сс. 198-199

24 D. K. Kouymjian, *A Historical and Dynastic Survey of Caucasia, Eastern Anatolia and Adharbayjan from the X<sup>th</sup> to the XIII<sup>th</sup> centuries.* - «Հայկագեան Հայագիտական հանդէս», Պէյրութ, 1971, էջ 118

ցում, որն ակնյայտօրէն կրկնում է հայկական տապանաքարի՝ խաչքարի մոտիւրը, որտեղ խաչը փոխարինուած է բուսական զարդանախշով: Այստեղ մենք տեսնում ենք ոչ միայն կախուածութիւն աւելի վաղ հայկական քրիստոնէական տապանաքարերից՝ զարդանախշի գաղափարի եւ ընդհանուր յօրինուածքի առումով, այլև, առանձին դէպքերում, ինչպէս մենք հնարաւորութիւն ունեցանք ապացուցելու կարծում պահպանուած յուշարձանների օրինակով, հին հայկական խաչքարի վերափոխում, որի վրայի խաչը, տեղադրուած սալաքարի կենտրոնական մասում, տաշուած է, եւ դաշտը նախապատրաստուած սելջուկեան զարդանախշի տեղադրման համար»<sup>28</sup>:

Քննուող դրամի XII դարում հատուած լինելու մասին վկայում է նրա քրիստոնէական խորհրդանիշ խաչը, քանի որ, ինչպէս արդէն նշուել է, քրիստոնէական պատկերները, խորհրդանիշերը, բիւզանդական դրամների ընդօրինակութիւնները եւ բիւզանդական դրամների վրայ սելջուկեան տիրակալների մակադրոշմները հանդիպում են միայն XII դարում: Աւելացնենք նաեւ, որ Իրաքի սելջուկները որոնք կրում էին սուլթան մուազիմ շահնշահ տիրողը, որպէս մահմեդականների գերագոյն աշխարհիկ իշխանութիւն՝ սիւլթան, հանդէս են գալիս միայն XII դարում:

Վայքից գտնուած խաչով դրամի հետ յայտնաբերուել է նաեւ Իզ ադ-Ղին Սալդուխի ճանաչուած տիպը, դիմերեսին՝ բիւզանդական Յովհան II կոմնէնի դրամի ընդօրինակութեամբ: Սալդուխեան դրամների գտածոները Հայաստանի տարածքում այնքան բացառիկ են, որ իրար հետ այս երկու դրամական տիպերի յայտնաբերուե-

լը մեզ նոյնպէս հիմք է տալիս խաչով այս դրամի տիպը վերագրել Իզ ադ-Ղին Սալդուխին:



Նկար 1



Նկար 2

28 И. А. Орбели, *Проблема сельджуцкого искусства*, Доклады III международного конгресса по иранскому искусству и археологии, Ленинград, 1935: Москва-Ленинград 1939, с. 152